

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համապատասխանության երկրորդ զեկույցի սույն լրացումը գնահատում է Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներկայացված հանձնարարականների կատարման ուղղությամբ (տե՛ս 2-րդ պարբերությունը): ԳՐԵԿՈ-ի կողմից չորրորդ փուլի գնահատումը վերաբերում է «Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը»:

2. [Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 69-րդ լիազումար նիստին (2015 թվականի հոկտեմբերի 16-ին) եւ հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

3. [Համապատասխանության զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 78-րդ լիազումար նիստում (2017 թվականի դեկտեմբերի 8-ին) եւ հրապարակվել է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

4. [Համապատասխանության երկրորդ զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 84-րդ լիազումար նիստում (2019 թվականի դեկտեմբերի 6-ին) եւ հրապարակվել է 2019 թվականի դեկտեմբերի 12-ին՝ Հայաստանի կողմից հաստատում ստանալուց հետո: Այդ զեկույցի մեջ ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ համապատասխանության ցածր մակարդակը Կանոնակարգի խմբագրված 31-րդ հոդվածի 8.3 կետի իմաստով «համընդհանուր անբավարար է», եւ որոշել է կիրառել 32-րդ հոդվածը, որը վերաբերում է փոխադարձ Գնահատման զեկույցում ներառված հանձնարարականների կատարումը չապահոված անդամներին:

5. [Համապատասխանության միջանկյալ զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 88-րդ լիազումար նիստում (2021 թվականի սեպտեմբերի 22-ին) եւ հրապարակվել է 2021 թվականի հոկտեմբերի 8-ին՝ Հայաստանի կողմից

թույլտվություն ստանալուց հետո: ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ հանձնարարականներին համապատասխանության մակարդակը շարունակում է մնալ «համընդհանուր անբավարար», եւ որոշել է շարունակել կիրառել 32-րդ հոդվածը:

6. [Համապատասխանության երկրորդ միջանկյալ զեկույցն](#) ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 93-րդ լիազումար նիստում (2023 թվականի մարտի 24-ին) եւ հրապարակվել է 2023 թվականի ապրիլի 3-ին՝ Հայաստանի կողմից հաստատում ստանալուց հետո: ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ հանձնարարականներին համապատասխանության մակարդակն այլեւս «համընդհանուր անբավարար» չէ, հետեւաբար որոշել է չշարունակել 32-րդ հոդվածի կիրառումը եւ հայկական պատվիրակության ղեկավարին խնդրել է մինչեւ 2024 թվականի մարտի 31-ը տրամադրել հաշվետվություն՝ չկատարված հանձնարարականների կատարման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

7. 2024 թվականի ապրիլի 17-ին Հայաստանի իշխանությունները ներկայացրել են Իրավիճակային զեկույց՝ չկատարված հանձնարարականների կատարմանն ուղղված հետագա ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Այդ տեղեկությունը հիմք է ծառայել սույն՝ Համապատասխանության երկրորդ զեկույցի լրացման համար:

8. Համապատասխանության ընթացակարգի առնչությամբ համազեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Վրաստանը (պատգամավորների վերաբերյալ) եւ Հունգարիան (դատավորների եւ դատախազների վերաբերյալ): Վրաստանի կողմից զեկուցող է նշանակվել պարոն Գիորգի ԲԱԳԴԱՎԱՁԵՆ, իսկ Հունգարիայի կողմից՝ պարոն Դավիդ ՍԱԿԱՉԸ: Սույն զեկույցը կազմելու աշխատանքներում նրանց աջակցել է ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:

II. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

9. ԳՐԵԿՈ-ն Չորրորդ փուլի գնահատման իր զեկույցում Հայաստանին

ներկայացրել է 18 հանձնարարական: Համապատասխանության երկրորդ միջանկյալ զեկույցում ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ ինը հանձնարարականներ (v, vi, x, xii, xiii, xiv, xv, xvii եւ xviii) բավարար չափով կատարվել են, կամ դրանց բավարար չափով անդրադարձ է կատարվել, իսկ ինը հանձնարարականներ (i-iv, vii-ix, xi եւ xvi) մասնակի են կատարվել: Չկատարված հանձնարարականների համապատասխանության հարցը քննարկվում է ստորև:

Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների շրջանում

Հանձնարարական i

10. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է, որպեսզի Ազգային ժողովում օրենսդրական գործընթացների թափանցիկությունն ապահովվի եւ հետագայում բարելավվի՝ i) ապահովելով, որ օրենքի նախագծերի շուրջ հանրային քննարկումների պահանջը գործնականում կատարվի, եւ Ազգային ժողով ներկայացվող նախագծերը, ինչպես նաեւ փոփոխությունները հրապարակվեն ժամանակին, եւ ii) ձեռնարկելով համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ հանձնաժողովի նիստերի բովանդակությունը եւ դրա մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվեն, ինչպես նաեւ հանձնաժողովներն առավել ակտիվորեն կիրառեն խորհրդարանական լսումներ կազմակերպելու հնարավորությունը:

11. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել է մասնակի: Ինչ վերաբերում է հանձնարարականի առաջին մասին, ԳՐԵԿՈ-ն ողջունում է այն հանգամանքը, որ Կառավարության կողմից նախաձեռնված բոլոր օրենքների նախագծերի համար հանրային քննարկումները պարտադիր են, ինչը նախագծերի զգալի մեծամասնությունն էր կազմում, եւ որ հանրային քննարկումները պետք է ապահովվեն՝ անկախ անհետաձգելի համարվող օրենքների ընդունման ընթացակարգից: Սակայն ԳՐԵԿՈ-ն տեղեկություններ չունի, թե 2022 թվականին պատգամավորների կողմից նախաձեռնված 80 օրենքի նախագծերից քանիսին է նախորդել հանրային

քննարկում: Հանձնարարականի երկրորդ մասը գնահատվել էր որպես կատարված:

12. Հայաստանի իշխանություններն այժմ նշում են, որ 2022 թվականին պատգամավորների կողմից նախաձեռնված 80 օրենքի ընդունմանը որեւէ հանրային քննարկում չի նախորդել: Այնուամենայնիվ, 2023 թվականին պատգամավորների կողմից ներկայացված 26 օրենքի նախագծերի շուրջ Ազգային ժողովի կողմից կազմակերպվել են երկու խորհրդարանական լսումներ՝ աշխատանքային հարցերով օրենքների վերաբերյալ, 2022-2023 թվականներին տեղի են ունեցել քսանհինգ աշխատանքային քննարկումներ՝ առողջապահության թեմաներով, իսկ 2024 թվականին լսումներ են կազմակերպվել օրենսդրական բարեփոխումների թեմաներով՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում տարիքային շեմը բարձրացնելու համար: Նրանք նաեւ նշում են, որ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված բոլոր օրենքների նախագծերը հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում, եւ որ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկները կարող են էլեկտրոնային փոստով ուղարկվել պատգամավորներին եւ Մշտական հանձնաժողովներին:

13. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ իշխանությունների կողմից տրամադրված տեղեկություններից կարելի էր եզրակացնել, որ 2023 թվականից ի վեր պատգամավորների կողմից նախաձեռնված ավելի շատ թվով օրենքների նախագծեր են դառնում հանրային իրազեկման, հանրային լսումների եւ բանավեճերի թեմա եւ բաց են առցանց եղանակներով քննարկման հնարավորության համար: Դա իրադարձությունների ողջունելի զարգացում է՝ i հանձնարարականի չկատարված բաղադրիչին համապատասխան: ԳՐԵԿՈ-ն հույս է հայտնել, որ վերջին տարիների դրական միտումը կամրագրվի պրակտիկ գործունեությամբ: Ուստի, այն իշխանություններին կոչ է անում շարունակել ավելացնել պատգամավորների կողմից նախաձեռնվող օրենքների նախագծերի թիվը հանրային քննարկման համար՝ քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ:

14. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i հանձնարարականն իրականացվել է քավարար չափով:

15. Հետագայում նշվել է, որ Հայաստանում օրենքների նախագծերի ճնշող մեծամասնությունը նախաձեռնվում է Կառավարության կողմից: Համապատասխան հանձնարարական տրվել է [Հինգերորդ փուլի գնահատման զեկույցում](#) (հանձնարարական vi), որի իրականացումը գնահատվելու է համապատասխանության ընթացակարգի շրջանակներում:

Հանձնարարական ii

16. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ (i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք եւ այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որը շահերի բախման եւ հարակից ոլորտների, մասնավորապես՝ նվերների եւ այլ առավելությունների ընդունման, անհամարելիության պահանջների եւ վճարովի այլ աշխատանքի, ֆինանսական շահերի, տեղեկատվության եւ պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործման եւ երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումների վերաբերյալ ուղեցույց կներառի, (ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն եւ իրազեկվածության մակարդակի բարձրացում:*

17. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: ԳՐԵԿՈ-ն նշել էր, որ բարեվարքությանն առնչվող մի քանի կանոններ կարգավորվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի ընդունումից հետո: Մասնավորապես, այժմ պահանջվում էր, որ բոլոր պատգամավորները գրանցեն իրենց ստացած նվերները: ԳՐԵԿՈ-ն նշել էր, որ պատգամավորների վարքագծի կանոնագիրքը պետք է լրամշակվեր՝ հաշվի առնելով հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, որոնք

ընդունվել են: Ակնկալվում էր, որ վերանայված կանոնագիրքը կընդունվի, եւ կկազմակերպվեն մասնագիտացված վերապատրաստումներ եւ իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողություններ:

18. Հայաստանի իշխանություններն այժմ հայտնում են, որ պատգամավորների վարքագծի կանոնագրքի ընդունումը պլանավորված է մինչեւ 2024 թվականի ավարտը՝ Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա գործողությունների ծրագրի համաձայն: Այդ ընդունումը պետք է ուղեկցվի պատգամավորների համար նախատեսված վերապատրաստումներով եւ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններով: Նրանք նաեւ նշում են, որ 2024 թվականի ապրիլին «Հանրային ծառայության մասին» օրենքով (պատգամավորների վերաբերյալ) բարելավվել է նվերներին առնչվող կարգավորումը, եւ այժմ ներառում է կանխատեսելի, հստակ եւ արդյունավետ դրույթներ՝ ստացված նվերները պետական սեփականությանը հանձնելու, ինչպես նաեւ ընդունելի նվերների ցանկն ավելի հստակեցնելու վերաբերյալ:

19. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ պատգամավորների կողմից ստացված նվերներին վերաբերող կանոնները խստացվել են, ինչը համահունչ է հանձնարարականին: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն դեռեւս սպասում է պատգամավորների վարքագծի կանոնագրքի ընդունմանը, որը վերաբերում է ոչ միայն նվերների հետ կապված հարցերի կարգավորմանը, այլ նաեւ շահերի բախման, լրացուցիչ գործունեության եւ ֆինանսական շահերի, տեղեկատվության ու հանրային ռեսուրսների չարաշահման եւ լոբբիստների հետ շփումների վերաբերյալ բարեվարքությանն առնչվող այլ հարցերի: Ավելին, ակնկալվում է, որ բարեվարքությանն առնչվող նմանատիպ կանոնները մասնագիտացված վերապատրաստման եւ իրազեկվածության մակարդակի բարձրացման, ինչպես նաեւ պատգամավորների համար համապատասխան խորհրդատվության առարկա կդառնան:

20. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ii հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Հանձնարարական iii

21. ԳՐԵԿՈՒ-ն առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող եւ նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

22. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: ԳՐԵԿՈՒ-ն ի գիտություն է ընդունել առևտրային կազմակերպություններում պատգամավորների բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները: Այն նաեւ նշել է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) իրականացնում է պատգամավորների անհամատեղելիության պահանջներին համապատասխանության մոնիթորինգ՝ հատուկ մեթոդաբանությամբ իրականացվող կանոնավոր ստուգումների միջոցով: Այնուամենայնիվ, այն այդպիսի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ էր ակնկալում:

23. Հայաստանի իշխանություններն այժմ նշում են, որ 2022 թվականին ԿԿՀ-ի կողմից յոթ վարույթ է հարուցվել վեց պատգամավորների նկատմամբ՝ անհամատեղելիության պահանջների ենթադրյալ խախտումների, այդ թվում՝ առևտրային կազմակերպությունում բաժնեմասերը չհայտարարագրելու կամ բաժնեմասերը հավատարմագրային կառավարման չհանձնելու համար: Այնուամենայնիվ, բոլոր ընթացակարգերը հանգեցրել են խախտումների բացակայության մասին եզրակացության: Իշխանությունները նաեւ հայտնում են, որ ԿԿՀ-ն շարունակում է ուսումնասիրել եւ պարզաբանումներ ներկայացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների, շահերի բախման եւ վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ լրատվամիջոցներում տեղ գտած

հայտարարությունների եւ հրապարակումների վերաբերյալ: 2024 թվականի առաջին կիսամյակում ՋԼՄ-ներում տեղ գտած ընդհանուր հիսունինը դիտարկված դիմումներից եւ հրապարակումներից անհամատեղելիության պահանջների վերաբերյալ դեպքերից երեքը վերաբերում են պատգամավորներին, իսկ մեկը՝ պատգամավորի օգնականին:

24. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ինչպես արդեն նկարագրվել է համապատասխանության նախորդ զեկույցներում, շահերի բախումը կանխելու նպատակով ընդունվել են օրենսդրական դրույթներ՝ պատգամավորների կողմից բաժնեմասերի փոխանցման վերաբերյալ: ԳՐԵԿՈ-ն այնուհետեւ նշում է ԿԿՀ-ի կողմից կանոնավոր ստուգումների միջոցով իրականացվող մոնիթորինգի դերը, ներառյալ՝ մինչ օրս իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ տրամադրված մանրամասները: ԳՐԵԿՈ-ն այնուհետեւ նշում է, որ Չորրորդ փուլի գնահատման զեկույցում առաջարկված միջոցառումներից մեկը՝ իրական շահառու հասկացության ներդրումը, նույնպես իրականացվել է՝: Ընդհանուր առմամբ, ԳՐԵԿՈ-ն գտնում է, որ այս հանձնարարականը հասցեագրվել է: ԳՐԵԿՈ-ն կոչ է անում իշխանություններին այս ոլորտը ուշադրության կենտրոնում պահել՝ հաշվի առնելով, որ տարիների ընթացքում ապացուցվել է, որ այն ռիսկային գործոն է պատգամավորների համար:

25. ԳՐԵԿՈ-ն, հետեւաբար, եզրակացնում է, որ iii հանձնարարականն իրականացվել է բավարար չափով:

Հանձնարարական iv

26. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների կողմից էթիկայի եւ վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ մոնիթորինգի համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար i) էթիկայի կանոնների եւ

¹ Հայաստանը առաջին երկրներից մեկն է, որ առցանց տվյալներ է հրապարակել իրական շահառուների վերաբերյալ (տե՛ս Հինգերորդ փուլի գնահատման զեկույց, 17-րդ պարբերություն):

անհամարելիության պահանջների և այլ գործունեության, շահերի բախման եւ նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական եւ նախաձեռնողական վերահսկողությունը, ii) համարժեք սանկցիաների միջոցով նորմերի կատարումը:

27. Նշվում է, որ նախորդ գեկույցում այս հանձնարարականն իրականացվել էր մասնակի, քանի որ ԳՐԵԿՈ-ն ակնկալում էր ավելի շատ տեղեկություններ ստանալ էթիկայի մշտական հանձնաժողովի ստեղծման եւ իրավակիրառ ոլորտում դրա լիազորությունների հետ կապված առաջընթացի մասին:

28. Իշխանություններն այժմ նշում են, որ նախատեսվում է, որ պատգամավորների վարքագծի կանոնագիրքը եւ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողով ստեղծելու իրավական շրջանակը կընդունվեն մինչեւ 2024 թվականի ավարտը՝ Հակակոռուպցիոն ռազմավարությանը համապատասխան:

29. Քանի որ էթիկայի մշտական հանձնաժողովի ստեղծման եւ իրավակիրառ ոլորտում դրա լիազորությունների հետ կապված որեւէ զարգացում տեղի չի ունեցել, ԳՐԵԿՈ-ն կարող է միայն եզրակացնել, որ iv հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Կոռուպցիայի կանխարգելումը դատավորների շրջանում

Հանձնարարական vii

30. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը եւ նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը եւ պահանջել նրանից փալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, եւ ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման՝ դատական կարգով բողոքարկման հնարավորությունը:

31. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: Նկատի ունենալով, որ հանձնարարականի առաջին մասն արդեն կատարվել է, ԳՐԵԿՈ-ն շարունակում է մտահոգություն հայտնել հանձնարարականի երկրորդ մասի վերաբերյալ այն առումով, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխությունները, որոնցով ներդրվում է Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ)՝ դատավորների վերաբերյալ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմ, դեռ պետք է ամփոփվի եւ ընդունվեն:

32. Հայաստանի Իշխանություններն այժմ հաղորդում են, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների վերաբերյալ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմը ներդրվել է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով, որոնք ընդունվել են 2023 թվականի հոկտեմբերի 25-ին: Այս մեխանիզմով նախատեսվում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական տույժի դեմ ներկայացված բողոքն այնուհետեւ քննվում է ԲԴԽ-ի կողմից՝ կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացրած հանձնաժողովի կազմում չընդգրկված անդամներից բաղկացած հանձնաժողովի միջոցով: Բողոքը քննվում է երկամսյա ժամկետում: ԲԴԽ-ն կարող է վիճարկել կարգապահական որոշումը կամ նշանակել այլ կարգապահական տույժ: Իշխանությունները նշում են, որ այս մեխանիզմը դեռ չի գործում, քանի որ դեռեւս չկա ԲԴԽ որոշում՝ չորս անդամից բաղկացած հանձնաժողով ստեղծելու մասին: Այն մշակվում է Եվրոպայի խորհրդի փորձագիտական աջակցությամբ:

33. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում դատավորի նկատմամբ կարգապահական որոշումը ԲԴԽ-ի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովում բողոքարկելու նոր մեխանիզմը, որը ներդրվել է 2023 թվականի հոկտեմբերին ընդունված «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով: Չնայած նրան, որ առաջարկվել էր դատական կարգով բողոքարկման տարբերակ, ԳՐԵԿՈ-ն ընդունում է, որ ԲԴԽ-ի կազմում

բողոքարկման ատյանի ստեղծումն ընդունելի լուծում է, ինչպես նշվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից: ԳՐԵԿՈ-ն ակնկալում է, որ ԲԴԽ-ն համապատասխան որոշում կընդունի, որպեսզի այս բողոքարկման ատյանն իսկապես ստեղծվի, ինչի արդյունքում «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի փոփոխություններով նախատեսված մեխանիզմն ուժի մեջ կմտնի: Այնուամենայնիվ, այն չի կարող համարել, որ հանձնարարականն ամբողջությամբ կատարված է:

34. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vii հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Հանձնարարական viii

35. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ (i) վերանայել դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթում Արդարադատության նախարարության դերակատարությունը, (ii) ներդնել համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթները չօգտագործվեն որպես դատավորների նկատմամբ ներգործության կամ վրեժխնդրության միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:

36. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ Արդարադատության նախարարությունը դեռևս իրավունք ունի կարգապահական վարույթ հարուցելու դատավորների նկատմամբ, եւ որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի նոր փոփոխությունների նախագիծը, որով Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման մեխանիզմ է ներդրվում, դեռևս չի ընդունվել:

37. Հայաստանի իշխանություններն այժմ նշում են, որ Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հաստատել է Արդարադատության նախարարի՝ դատավորների նկատմամբ կարգապահական

վարույթ հարուցելու իրավասությունը: Իշխանությունները նշում են, որ նախարարի այս իրավասությունը նախատեսվում է հանել միայն այն ժամանակ, երբ դատավորների Ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը, որը ներկայումս կարգապահական վարույթ հարուցելու այլընտրանքային մարմին է, ապացուցի իր արդյունավետությունը և քրոնիզմի բացակայությունը²: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխությունների նախագիծը նպատակ ունի բարձրացնելու այս Հանձնաժողովի արդյունավետությունն իր ոչ դատավոր անդամների թվի ավելացման հարցում, որպեսզի այն բաղկացած լինի 6 դատավոր եւ 5 ոչ դատավոր անդամից. այս ոչ դատավոր անդամներից ընտրված փաստաբանի դեպքում նրա լիցենզիան կկասեցվի՝ շահերի բախման ռիսկերից խուսափելու եւ (կամ) քրոնիզմը բացառելու նպատակով: Իշխանությունները նաեւ նշում են, որ իրենք ուսումնասիրում են Վենետիկի հանձնաժողովի եւ Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը՝ Հանձնաժողովի կողմից ձեռնարկված բարեփոխումներն ուղղորդելու համար³:

38. ԳՐԵԿՈՒՆ նշում է՝ ինչ վերաբերում է հանձնարարականի առաջին մասին, ապա այս փուլում Արդարադատության նախարարության դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարցում չի վերանայվել: Այն հաշվի է առնում իշխանությունների՝ այս դիրքորոշումը վերանայելու պատրաստակամությունը, երբ կամրապնդվեն դատավորների Ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի արդյունավետությունն ու արդարությունը: Հետեւաբար ԳՐԵԿՈՒՆ չի կարող համարել հանձնարարականի այս հատվածը թեկուզ մասնակի կատարված: Ինչ

² Հայաստանի իշխանությունների կողմից տրված վիճակագրության համաձայն՝ 2023 թվականին դատավորի հնարավոր կարգապահական պատասխանատվության վերաբերյալ հարուցված 652 գործով վարույթ է ընդունվել 288 գործ, իսկ Հանձնաժողովը հարուցել է 13 կարգապահական վարույթ: Դրանցից 8-ը կարճվել են, 4-ը դեռ ընթացքի մեջ են, եւ միայն մեկն է ուղարկվել ԲԴԽ՝ դատավորի կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու համար: Իր կողմից հարուցված եւ վարույթ ընդունված 487 գործով Արդարադատության նախարարությունը հարուցել է 21 կարգապահական վարույթ: Ութ վարույթ դադարեցվել է, 13 գործով վարույթ փոխանցվել է ԲԴԽ:

³ Հայաստան - Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ԳՏ-Ի) համատեղ կարծիքը Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ, որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 137-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2023 թվականի դեկտեմբերի 15-16) - CDL-AD(2023)045:

վերաբերում է որոշման երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ներդրվել է դատավորների նկատմամբ կարգապահական տույժերը բողոքարկելու ընդունելի մեխանիզմ (տե՛ս վերելում նշված 32-րդ պարբերությունը), որի համապատասխանությունը հանձնարարականին կապահովվի այս մեխանիզմի գործարկվելուն պես:

39. Հետևաբար, ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ viii հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Հանձնարարական ix

40. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ներդնել արդյունավետ կանոններ եւ կառուցակարգեր՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտելու դեպքերը բացահայտելու եւ այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:*

41. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: ԳՐԵԿՈ-ն վերահաստատել է իր դիրքորոշումը, որ 2018 թվականի Դատական օրենսգրքով սահմանված կանոնների կիրարկման շրջանակներում առավել շոշափելի արդյունքներ պետք է գրանցվեն, մասնավորապես՝ երկու գործերի վերջնարդյունքի վերաբերյալ, երբ դատավորները դիմել են ԲԴԽ՝ իրենց գործունեությանն արտաքին միջամտության մասին հաղորդելու համար:

42. Հայաստանի իշխանություններն այժմ հայտնում են, որ *Միջանկյալ* զեկույցում նշված երկու դեպքերի առնչությամբ 2021 թվականի մարտի 25-ին դատավորը դիմել է ԲԴԽ, քանի որ նկատել է, որ բարձր հանրային հնչեղություն ունեցող գործի դատավարության ժամանակ լրատվամիջոցներում պարբերաբար հայտնվում էին տեղեկություններ, որտեղ նշվում էր իր գործունեությանը միջամտության եւ իր եւ իր ընտանիքի անվտանգությանը սպառնալիքի մասին:

ԲԴԽ-ն նրա համար պետական պաշտպանություն է խնդրել, որն ավարտվել է 2022 թվականի ապրիլին: Երկրորդ գործով 2021 թվականի մայիսին դատավորը դիմել է ԲԴԽ, քանի որ քրեական դատավարության շրջանակներում ինքը հարցաքննվել է Հատուկ քննչական ծառայության քննիչի կողմից: ԲԴԽ-ն Հատուկ քննչական ծառայության ղեկավարին հանձնարարել է միջոցներ ձեռնարկել, իսկ քրեական դատավարության համար համապատասխան նյութերը ԲԴԽ նախագահի կողմից ներկայացվել են քննիչներին: Այնուհետև քրեական դատավարությունը փոխանցվել է ՀԿԿ-ին և կարճվել հանցակազմի բացակայության հիմքով: Բացի այդ, 2023 թվականին յոթ դատավորներ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի հիման վրա դիմել են ԲԴԽ՝ իրենց դատական գործունեությանը միջամտելու համար, և իրավասու մարմիններին խնդրել են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել⁴: Այս գործերից մեկով 2023 թվականի ապրիլին Շիրակի մարզային քննչական վարչությունում քրեական գործ է հարուցվել՝ Քրեական օրենսգրքի 489-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սոցցանցերում վիրավորանքներ և իր դատական լիազորությունների իրականացման հետ կապված սպառնալիքներ պարունակող հրապարակման համար: Մյուս գործով Քննչական վարչությունը հետաքննություն էր սկսել երեք դատավորների նկատմամբ դրսևորված անհարգալից վերաբերմունքի համար, և մեղադրյալին մեղադրանք էր առաջադրվել նույն դրույթի հիման վրա: 2022 թվականի սեպտեմբերին առաջին ատյանի դատարանն անդրադարձել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից արդարադատության իրականացմանը Բարձրագույն դատական խորհրդի նախագահի (2019 թվականի հուլիսից) կողմից արված միջամտությանը վերաբերող գործին: Գործը գտնվում է Վերաքննիչ քրեական դատարանի վարույթում:

43. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում այն գործերի վերաբերյալ տրամադրված տեղեկությունները, երբ վարույթներ են հարուցվել, և պատժամիջոցներ են կիրառվել դատական իշխանությանը երրորդ անձանց կողմից անհիմն միջամտելու

⁴ Դատավոր Էդ.Հ.՝ 2023 թվականի մարտի 3, դատավոր Լ.Խ.՝ 2023 թվականի ապրիլի 3, դատավորներ Էդ.Հ., Ա.Ա. և Հ.Մ.՝ 2023 թվականի մայիսի 8, դատավոր Ն.Գ.՝ 2023 թվականի հոկտեմբերի 11, դատավոր Ս.Ռ.՝ 2023 թվականի նոյեմբերի 28:

համար: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն հիշեցնում է, որ հանձնարարականն առանձին դատավորների անկախության եւ նրանց որոշումների անաչառության վերաբերյալ մտահոգությունների արդյունք է, որոնք վտանգված են հատկապես այն գործելաոճով, երբ ստորադաս ատյանի դատարանի դատավորները խորհրդակցում են վերադաս ատյանի դատարանների դատավորների հետ՝ վախենալով, որ վճիռները կբեկանվեն, եւ դատավորները կարգապահական պատասխանատվության կամ նույնիսկ ճնշումների եւ քրեական հետապնդումների կենթարկվեն անօրինական որոշումներ ընդունելու համար: Իշխանությունների կողմից հաղորդված կոնկրետ իրավիճակների մեծ մասին դա չի վերաբերում, այսինքն ներկայացված են դեպքեր, որոնք վերաբերում են երրորդ անձանց, այլ ոչ ավելի բարձր ատյանի դատարանների դատավորների կողմից միջամտությանը: ԳՐԵԿՈ-ն արդեն ողջունել է այդ ընթացքում նման անհարկի միջամտությունը կանխելուն ուղղված կանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ Դատական օրենսգրքի դրույթները, որոնք դատավորներից պահանջում են էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովին տեղեկացնել արդարադատության իրականացմանը ցանկացած միջամտության մասին: Այդուհանդերձ, բավարար ապացույցներ չեն ներկայացվել առ այն, որ այս մեխանիզմը գործնականում արդյունավետ է աշխատում, որ այդպիսի կոնկրետ դեպքերին բավարար ուշադրություն է դարձվում, եւ որ այլ դատավորների կողմից արդարադատության իրականացմանը միջամտող դատավորների կամ իրենց գործունեությանն անհարկի միջամտության մասին հաղորդում չներկայացրած անձանց նկատմամբ պատշաճ պատժամիջոցներ են կիրառվում: Այս համատեքստում ԳՐԵԿՈ-ն դեռեւս ակնկալում է, որ առավել տեսանելի արդյունքներ կներկայացվեն՝ համարելու համար, որ հանձնարարականն ամբողջությամբ կատարվել է:

44. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Հանձնարարական xi

45. ԳՐԵԿՈՒ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների գործունեությանն անհարկի միջամտությունը, դատական իշխանությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, ինչը ներառում է՝ i) բոլոր դատավորների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, դատական անաչառության եւ անկախության, ինչպես նաեւ շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, որոնք պետք է կազմակերպվեն դատական իշխանության ներգրավվածությամբ, եւ ii) դատական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու եւ «i» մասում նշված ոլորտների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:

46. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, ԳՐԵԿՈՒ-ն դեռեւս ակնկալում էր չեզոք եւ իրավասու մարմնի ստեղծում՝ դատավորներին գաղտնի խորհրդատվություն տրամադրելու համար՝ հաշվի առնելով, որ այն հանձնարարականի առաջին մասը նախկինում համարել էր կատարված:

47. Հայաստանի իշխանություններն այժմ հայտնում են, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխությունների նախագծով նախատեսվում է դատավորների Ընդհանուր ժողովի կազմում հինգ անդամից բաղկացած խորհրդատվական հանձնաժողովի ձեւավորում, որի կազմում երկուսը կլինեն ոչ դատավոր, իսկ երեքը՝ դատավոր անդամներ՝ յուրաքանչյուր ատյանից ընդգրկելով մեկական դատավոր: Այն գաղտնի խորհրդատվություն է տրամադրելու դատավորներին էթիկայի եւ կարգապահական կանոնների վերաբերյալ: Հանձնաժողովն առնվազն տարին մեկ անգամ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու է ուղեցույց՝ անդրադառնալով բարձրացված խնդիրներին եւ առաջարկելով լուծումներ: Ընդհանուր ժողովի կազմում այս չեզոք մարմինը գործելու է կարգապահական

մեխանիզմներից անկախ:

48. ԳՐԵԿՈ-ն ողջունում է դատավորների Ընդհանուր ժողովի կազմում խորհրդատվական հանձնաժողովի պլանավորված ստեղծումը, որի նպատակն է գաղտնի խորհրդատվություն տրամադրել դատական իշխանությանը, եւ իշխանություններին կոչ է անում ավարտին հասցնել այս նախագիծը: Դրանից հետո միայն հնարավոր կլինի հանձնարարականը համարել ամբողջովին իրականացված:

49. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xi հանձնարարականը մնում է մասնակի կատարված:

Բոլոր խումբ անձանց առնչությամբ

Հանձնարարական xvi

50. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետազայում մշակել պատգամավորների, դատավորների եւ դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններն այնպես, որ հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնահրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներդնել ստացված նվերների մասին մոնիթորինգ իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող առանձնահատուկ դեպքում նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:*

51. Նշվում է, որ նախորդ զեկույցի համաձայն՝ այս հանձնարարականը կատարվել էր մասնակի: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ «Հանրային ծառայության մասին» եւ հարակից օրենքներում կատարված փոփոխություններն ընդունվել են 2022 թվականի դեկտեմբերին, եւ ողջունել է պատգամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ նվերներին վերաբերող միասնական

կանոնները եւ «նվեր» եւ «հյուրասիրություն» հասկացությունների հստակեցումը: Այն ակնկալում էր, որ կգործարկվեն նվերների հաշվառման համակարգը եւ խորհրդատվական կարծիքի տրամադրման ընթացակարգը:

52. Հայաստանի իշխանություններն այժմ հայտնում են, որ 2024 թվականի ապրիլին բարելավվել են նվերների վերաբերյալ կարգավորումները «Հանրային ծառայության մասին» օրենքում (տե՛ս վերելում 18-րդ պարբերությունը): ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարին: Այն սահմանում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների գրանցման, փոխանցման եւ գնահատման, նվերների հաշվառման մատյանը վարելու կարգը: Ազգային ժողովի պատգամավորի ստացած նվերը վերադարձնելու առաջին դեպքն արձանագրվել է 2024 թվականի հունվարին: ԿԿՀ-ն մշակել է իր կայքում հրապարակել է նվերների գրանցման էլեկտրոնային ձեւաթուղթ, ինչպես նաեւ ձեւաթուղթը լրացնելու տեսաձայնագրություն եւ տեքստային ուղեցույց⁵: Միեւնույն ժամանակ, ԿԿՀ-ն 2024 թվականի հունիսին հրապարակել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տրամադրելու մեթոդական ուղեցույց⁶: Նվերների հաշվառման հարթակի որոշ բաղադրիչներ պետք է վերջնականացվեն մինչեւ 2024 թվականի ավարտը:

53. Ավելին, ԿԿՀ-ի կողմից կազմակերպվել են վերապատրաստումներ եւ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղված միջոցառումներ՝ տարբեր խմբերի հանրային ծառայողների եւ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար նվերների ընդունման կանոնակարգերի եւ սահմանափակումների, դրանց հաշվառման գործընթացի եւ օրենսդրական կարգավորումներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ: 2024 թվականին այս թեմաներով վերապատրաստվել է 267 հանրային ծառայող (ներառյալ Ազգային

⁵ <http://cpcarmenia.am/hy/news/item/2024/01/05/1/>

⁶ https://drive.google.com/file/d/15dG0t2T0uOTHGKTyca_R_UxYiBeuNwC5/view

Ժողովի աշխատակազմը):

54. ԳՐԵԿՈ-ն ողջունում է նվերների վերաբերյալ կանոնների արդիականացման վերաբերյալ արձանագրված զարգացումները, ներառյալ՝ ստացված նվերների վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցի հրատարակումը, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների եւ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված համապատասխան վերապատրաստումները, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներն ու էլեկտրոնային խորհրդատվական գործիքները: Այն հաշվի է առնում նվերների գրանցման գործընթացը կառավարելու նոր էլեկտրոնային գործիքների պարբերական ստեղծումը, որի նպատակն է առկա էլեկտրոնային գրանցման ձեռաթղթերի փոխարինումն է: Սա համապատասխանում է հանձնարարականին: Հաշվի առնելով 2022 թվականի դեկտեմբերին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի եւ հարակից օրենքների ընդունումը՝ պատգամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ նվերներին վերաբերող միասնական կանոնները եւ «նվեր» եւ «հյուրասիրություն» հասկացությունների հստակեցումը, այս լրացուցիչ միջոցների հետ մեկտեղ՝ ԳՐԵԿՈ-ն համարում է, որ հանձնարարականի նպատակն իրականացվել է:

55. Մինչդեռ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xvi հանձնարարականն իրականացվել է բավարար չափով:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

56. Վերոնշյալի հաշվառմամբ՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ Հայաստանը լրացուցիչ քայլեր ձեռնարկել է Գնահատման չորրորդ փուլի չկատարված հանձնարարականներին համապատասխանելու համար: Գնահատման չորրորդ փուլի զեկույցում ամփոփված տասնութ հանձնարարականներից տասներկուսն այժմ կատարվել են բավարար չափով կամ դրանց անդրադարձ է կատարվել բավարար չափով: Վեց հանձնարարականներ շարունակում են մնալ մասնակի կատարված:

57. Ավելի կոնկրետ՝ i, iii, v, vi, x, xii, xiii, xiv, xv, xvi, xvii եւ xviii հանձնարարականները կատարվել են բավարար չափով, կամ դրանց անդրադարձ է կատարվել բավարար չափով, իսկ ii, iv, vii-ix եւ xi հանձնարարականները կատարվել են մասնակի:

58. Պատգամավորների առնչությամբ թերեւս նկատվում է որոշ առաջընթաց: Իշխանությունները դրական օրինակներ են նշել խորհրդարանական աշխատանքին հանրային ներգրավվածության պրակտիկայի վերաբերյալ: Նույն կերպ, միջոցներ են ձեռնարկվել պատգամավորների շրջանում շահերի բախումը կանխելու (օրինակ՝ առետրային կազմակերպություններում պատգամավորների բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու կարգավորումներ) եւ այս ոլորտին ոլորտում ավելի մեծ վերահսկողություն ապահովելու համար: Վերանայվել են նաեւ նվերներին վերաբերող կանոնները: Դեռեւս պետք է ընդունվի վարքագծի կանոնագիրք, որը պետք է զուգակցվի վերահսկողության, խորհրդատվական եւ իրազեկվածության բարձրացման արդյունավետ միջոցառումներով:

59. Դատական իշխանության վերաբերյալ հարկ է նշել, որ Արդարադատության նախարարը դեռեւս դերակատարություն ունի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում: Այնուամենայնիվ, Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության գործողությունների

ծրագրով նախատեսվում է դատավորների Ընդհանուր ժողովի Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշռի վերանայում: Դատավորների նշանակման եւ առաջխաղացման մասին որոշումների համար նախատեսվել են բողոքարկման մեխանիզմներ: Պաշտոնից ազատելու մասին որոշումների համար «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի փոփոխություններով ներդրվել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման մեխանիզմ, որը դեռեւս չի գործարկվել:

60. Բոլոր խումբ անձանց առնչվող մասով հստակեցվել եւ թարմացվել են նվերների ընդունման կանոնները:

61. Համապատասխանության երկրորդ զեկույցի սույն Լրացման ընդունմամբ Հայաստանի համար ավարտվում է Չորրորդ փուլի համապատասխանության ընթացակարգը: Հայաստանի իշխանությունները, այնուամենայնիվ, կարող են ցանկություն ունենալ ԳՐԵԿՈ-ին տեղեկացնել չկատարված (այն է՝ ii, iv, vii-ix եւ xi) հանձնարարականների իրականացման հետագա առաջընթացի մասին:

62. Ի վերջո, ԳՐԵԿՈ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հնարավորինս շուտ թույլատրել զեկույցի հրապարակումը, թարգմանել զեկույցը պետական լեզվով եւ հրապարակել այդ թարգմանությունը: